Այս հանճարիս վրայ ամենէն աւելի զարմացողներէն մէկը կը գրէ, թէ իրեն երկասիրութիւնն՝ ապագայից պայծառ տեսութիւն մ'է, վերապահեալ աշխարհի՝ այս օրէն սկսեալ մինչև ցօրն վերջին․ իսկ ընդհակառակն՝ յաշխարհէս բան մ'ալ չընդունիր, մանաւանդ թէ կը մերժէ ամեն նորութիւն, իբրև հեղեղ մը մոլար գաղափարաց, որոնք զհետ իւրեանց անբաւ և ահաւոր աւերմունք կը թողուն․

Իմաստասիրական բովանդակութիւն ԺԹի դարուն՝ գրքէն, որ կը հրատարակուի 'ի Պարչելոնայ և կը վաճառուի ամբողջապէս յօգուտ դանձանակին (obolo) Ս․ Պետրոսի, արդէն իսկ շատ հատորներ 'ի լոյս ընծայուած են, որոնց առաջինը՝ Ջգաղանի աղանդոց գրուած է․

«Զինարան է ամենայն պատմական, քաղաքական, բնաբանական և ուսումնական հաւատոց և վարդապետութեան, որոնց մէջ հաւաքուած են այն ամեն լաւն ու բարին որ 1832էն ելած է 'ի մօտաց Եկեղեցւոյ և 'ի բազմահմուտ ուղղափառաց․ փոխանակ Բովանդակութեան՝ կրնայ կոչուիլ լաւ ևս Սպառազինութիւն մը, կը գոչէ Գ. Վինկենտիոս Լաֆուէնդէ՝ Ակադեմիա ըսուած պարբերականին մէջ, որ կը հրատարակուի 'ի Մադրիտ․

Նոր-հեթանոսութիւն, անտարբերութիւն, գրականութիւն, և հոգեկանութիւն՝ առաջին հատորին մէջ ճառուած են. երկրորդին մէջ 'ի հանդիսի կ'երևին բողոքականութիւն, բանականութիւն և ոչնչականութիւն. երրորդին մէջ ազատականութեան վրայ կը խօսի և քան զամենայն ահաւորագոյն թշնամի կը համարի զայն Եկեղեցւոյ․

Կան բարեպաշտ ուղղափառք, որոնց առ Իմաստասիրական բովանդակութեան զարմանքն չափ չունի․ Լսենք ահա, թէ ինչպէս կը խօսի Ֆլորէնցայէն գրուած նամակի մը մէջ, եպիսկոպոսն Յովհաննէս Տէ-Ստէփանի կամիլլէս՝ պաճուճեալ մականուամբ Անապատական կոչուած․

«Սպասեցէք 'ի զուր, ոչ ոք ձեզի ուշ պիտի դնէ, և ոչ իսկ անոնք՝ որոնք զձեզ պաշտպանելու առաջին պէտք էին ըլլալ․․․, այս է ահա առաջին չարչարանքն՝ զոր Աստուած իրեն հաւատացելոց կրել կուտայ․․․ առանց նախապաշարումն ունենալու արեամբ մկրտութեան, որ յետոյ կրնայ հանդիպիլ․

«Օր մը պիտի գայ, յորում այն ամենայն մէգ և խաւար՝ որ այժմ բովանդակ աշխարհք կը պատեն՝ պիտի փարատին. և այն ժամանակ ԺԹ դարու Իմաստասիրական բովանդակութիւնն՝ բոլորովին իւր լոյսը պիտի ճառագայթէ, և հոն պիտի տեսնուին Աստուծոյ արդարութեան և ողորմութեան իրաւունքն․ Աստուածային պատուհասից արդարացուցիչ հաւատքն հաւաքելը՝ նման է ինչպէս որ մէկն դաշնակաւորէր այն քնարն՝ որ օր մը պիտի հնչեցընէ մարդուս երախտագիտութեան յաղթական երգն դէպ առ իւր բնութեան Արարիչն »․

Այս յիշատակութիւնս՝ կրնայ բէնեավէր կոմսին իբրև ենթակայի տեղ ծառայել. իբրև բազդատութիւն մ'իւր մտածութեանց, որոնք անոր հանճարը կ'ոգևորեն և կը համապատասխանեն ճշդիւ իւր խստակեաց դիմաց գծագրութեանը․

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Որս Պալէնայի 'ի Նորվեկիա. — Նորվեկիոյ հիւսիսային կողմը Վաստոյ քաղքին մօտ կղզւոյ մը մէջ մասնաւոր գործարան մը կայ պալէնայի որսորդութեան համար, ուր տէրն Գ. Ֆոյն՝ երկայն արշաւանաց յարմար եղող նաւեր չգործածեր, որք կը դառնան տուն բերելով որսացուած պալէնայից օգտակարագոյն մասունքը միայն․ ինքը պզտի շոգենաւներ կը գործածէ՝ 150էն

digitised by A.R.A.R.@

մինչև 200 տակառանչափի ընդունակք, և զպալէնաները թնդանօթի հարուածով կը սպաննէ, և յետոյ վասոյի նաւահանգիստը կը տանի։ Այս ծովերուս մէջ ամենաշատ են պալէնայք քան ուրիշ տեղեր, և քիչ զգուշաւորք. և կը մօտենան այնչափ՝ որ թնդանօթի հարուածն կրնայ հասնիլ իրենց։ Առ առաւելն 20 ժամու մէջ իւրաքանչիւր շոգենաւ կ'երթայ ու կը դառնայ, յաճախ առատ աւարաւ բեռնաւորեալ։ Թնդանօթն նաւուն առաջքին վրայ հաստատուած է, և իրեն գնտակն երկաթէ երկայն ձողերէ կը կազմուի, որք միացեալ են մետաղական թելով որ զանոնք հաստատուն կը բռնէ հարթ հաւասար ուղղութեամբ, և իրենց հետ կապուած է ճայթող ռումբ մը 4 և մինչև 5 լիտր կշռող։ Երբոր հարուածն կ'արձըկուի, երկաթէ ձողունքն կամ սլաքքն կենդանւոյն մարմնոյն մէջ կը մխուին, որով կը սկսի սաստիկ արագութեամբ շտապել, և այս շտապմունքն իրեն մահ կը պատճառեն, վասն զի հակառակ ուղղութեամբ շարժելուն պատճառաւ՝ հրալից ռումբն գիւտաւոր կերպով պատրաստուած ըլլալով վրան կը ճաթի։ Սակայն երբեմն կ'ըլլայ որ պալէնան սաստիկ չվիրաւորուիր, և այս պարագայիս մէջ նաւը վտանգի մէջ կ'ինկնայ, վասն զի կենդանին այն ատեն իր ամենայն զօրութեամբը կը գործէ, և կրնայ շատ վնաս հասցընել։

Շոգեկառք Գահիրէն մինչև Յեփրատ։ — Ամերիկացիք կ'ուզեն բոլոր աշխարհք շոգեկառօք բեռնաւորել։ Ընկերութիւն մը ձևացաւ 'ի Պոսդըն երկաթուղի մը շինելու և բանեցընելու Գայիրէն, անցնելով Դուռն — Սայիդէն և Դամասկոսէն և տանել միացընել Եփրատայ հովտաց երկաթուղոյն, զոր անգղիական ընկերութիւն մը յանձն առաւ և սկսաւ շինել։

Դպրոցական վիճակագրութիւն Եւրոպիոյ. — Գերմանիոյ բնակիչն է 42 միլիոն, և ունի 600,000 դպրոց և 6 միլիոն աշակերտ։ Անգղիա 34 միլիոն, և ունի 580,000 դպրոց և 3 միլիոն աշակերտ։ Աւստրիա 31 միլիոն, և ունի 30,000 դպրոց և 3 միլիոն աշակերտ։ Գաղղիա 37 միլիոն, և ունի 71,000 դպրոց, և 4,700,000 աշակերտ։ Սպանիա, 15 միլիոն, և ունի 20,000 դպրոց և 1,500,000 աշակերտ։ Իտալիա 28 միլիոն, և ունի 47,000 դպրոց, և 1,500,000 աշակերտ։ Ռուսիա 74 միլիոն, և ունի 32,000 դպրոց և մէկ միլիոն աշակերտ։

Ուղևորութիւն 'ի Հիւս. բևեռ. — Շէյն (Chegne) հրամանատարին խընամքովը նոր ուղևորութիւն մը կը պատրաստուի դէպ 'ի Հիւս. բևեռ յամին 1881 Վէկա շոգենաւով, որուն անունն արդէն աշխարհածանօթ եղաւ 'ի ձեռն Նօրտէնսքէօլտի. նոյն յաջողութեան կը յուսայ նաև Պ. Տիքսոն։ — Ի Լոնտրա յանձնաժողով մը կազմուելով 30,000 ոսկեալին ժողվելու համար՝ արդէն բազմաթիւ ստորագրութիւններ ստացած է թէ դրամոյ և թէ ուրիշ միջոցներու, և փութով առարկութիւն պիտի ըլլայ 'ի խորհրդարանն։ Վէկայի նաւորդքն են քառասուն անձինք, և նաւն վարձեալ է 3 տարւոյ համար։ Խաղաղ օդոյ ժամանակ օդապարիկ գունդք պիտի գործածուին, զննելու երկրին կամ սառերու մակերևոյթն ուսկից սայլք պիտի անցնին. ուրիշ օդապարիկ մ'ալ պիտի ըլլայ 'ի պահեստ իրենց կարևոր եղածն հոգալու համար, զոր օրինակ Տիգքովըրի ծոցէն ածուխ բերելու, ուր հողոյն երեսը կը գտնուի ծովեզերքէն քիչ հեռու։

Շէյնի ուղևորութեամբ չորրորդն կը կատարուի վերջին 10 ամաց մէջ դէպ 'ի Հիւս. բևեռ։ Բոլարիս ամերիկեանինը յամին 1871, տևեց 30 ամիս և արժեց 10,413 ոսկեալին. Ալէրդ և Տիգքովըրի նաւուցն՝ յամին 1875, արժեց 112,250 ոսկեալին, և Վէկայինն՝ յամին 1878, տևեց երկու տարի և արժեց 20,000 ոսկեալին։

digitised by A.R.A.R.@